

## Ձոհրաբ Գովհաննիսյան

ԱՐՑԱԽՅԱԼ ՅԻՄՆԱԽՆԴԻՐԸ 1918-1921 թթ.

**Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, ադրբեջանական պատմական տարածք,  
մուսաֆաթական կառավարություն, Բաքու, Շուշի**

Չայ ժողովրդի նորագույն պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի ուսումնասիրությունը, որը դարձել է համաշխարհային չափանիշներով ազգամիջյան բարդ խնդիր և ունի գրեթե ութսունամյա պատմություն:

Քաղաքականապես հրատապ այս խնդիրը, որ ծագել է 1918-1923 թվականներին, դարձավ կենսական հիմնահարց ոչ միայն արցախահայության, այլև ողջ հայության համար: Ներկայիս ադրբեջանական պատմագրությունը Լեռնային Ղարաբաղը փորձում է ներկայացնել որպես ադրբեջանական պատմական տարածք, այնինչ հայտնի է, որ Արցախը մինչ այդ երբեք ադրբեջանական տարածք չի եղել և չի մտել Ադրբեջանի կազմի մեջ, որը մինչև 1918 թ. մայիսի 27-ը երբեք էլ չի եղել, իսկ Ադրբեջան անվանումը պաշտոնական գրագրության մեջ ի հայտ է եկել միայն 1936 թվականից:

Ադրբեջանի մուսաֆաթական կառավարության բացահայտ հակահայկական քաղաքականությունը նպատակ ուներ յուրացնել հայկական հողերը, ինչն էլ հանգեցրեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առաջացմանը 1918-1920-ական թվականներին, երբ երկրամասում իշխում էին բուրժուա-ազգայնական ուժերը: Իսկ 1920 թ. ապրիլին՝ երկրամասի խորհրդայնացումից հետո, այդ հարցում ոչ ճիշտ դիրքորոշում բռնեցին նաև Խորհրդային Ռուսաստանի, ապա՝ Խորհրդային Միության ղեկավար շրջանները, որոնք նույնպես կողմնակից էին Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում:

Արցախահայության ազատության ու գոյատևման համար մղված պայքարի բազմակողմանի հետազոտությունն ու վերլուծությունը ներկայումս ավելի է արժևորվում և գործնական նշանակություն ստանում, քանի որ այն դառնում է մայր Չայաստանի հետ միավորվելու համար 1988 թվականին Արձախողմ վերսկսված պայքարի պատմական, իրավական հիմնավորում: Տվյալ ժամանակաշրջանում արցախահայության մղած պայքարի ձևերն ու մեթոդները, ստեղծված ժողովրդական մարմինների գործունեության արդյունքները, ինչպես նաև թույլ տված բացթողումներն ու թերությունները, որոնք հանգեցրին արցախահայության համար ոչ ցանկալի հետևանքների, դառնում են դաս ներկայումս իր նպատակին հասնելու համար: Ղարաբաղյան հիմնահարցի բազմակողմանի ուսումնասիրությունը կարևոր է նաև մեր նորանկախ հանրապետության պետականության հաստատման ու անվտանգության ապահովման հետ կապված շատ խնդիրների լուսաբանման ուղեմիջ:

Մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ կատարվել են շատ ուսումնասիրություններ, համդես են եկել Գ. Գալոյանը և Կ. Խուրդավերդյանը,<sup>1</sup> Լ. Խուրշուդյանը,<sup>2</sup> Ս. Ջուլյանը,<sup>3</sup> Յու. Բարսեղովը,<sup>4</sup> Յր. Աբրահամյանը,<sup>5</sup> Բ. Ուլուբաբյանը<sup>6</sup> և այլ հեղինակներ, որոնց գործերը օգտագործվել են մեր կոմից:

Սույն աշխատանքը համեստ փորձ է՝ ուսումնասիրելու Ադրբեջանի կառավարության կողմից Լեռնային Ղարաբաղում վարած հակահայկական քաղաքականությունը, լուսաբանելու խորհրդային ղեկավարության դիրքորոշումը, 1921 թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշումը և դրա բացասական ազդեցությունը արցախահայության վրա:

Ղարաբաղյան հիմնախնդիրն առաջ եկավ Անդրկովկասյան սեյմի փլուզումից հետո, երբ ձևավորվեցին Անդրկովկասյան երեք հանրապետությունները, և լույս աշխարհ եկան մի շարք խնդրներ, որոնք պետք է դառնային հետագայում տարածաշրջանում հիմնական հակասությունների պատճառ: Միայն 1918 թվականի մայիսի 27-ին պատմության թատերաբեմ մտած Ադրբեջանի հանրապետությունը իր համար առօրեական խնդիր դարձրեց հայկական երեք երկրամասերի՝ Չանգեզուրի, Արցախի և Նախիջևանի բռնակցումը իրեն:

Հայաստանի նորանակախ Հանրապետությունը ստեղծվեց պատմական բարդ իրադրության պայմաններում: Բավականաչափ ռազմական և քաղաքական լծակներ չուներ, որպեսզի կարողանար իր սահմանների մեջ միավորել հայկական բոլոր տարածքները: Հենց դա էլ շարժառիթ դարձավ հարևանների, մասնավորապես մուսաֆաթական կառավարության համար հայկական երեք երկրամասերը ներկայացնելու որպես իր տարածքի բաղկացուցիչ հատվածներ: Մուսաֆաթական կառավարությունը, հիմք ընդունելով, որ պատմական Արցախ աշխարհը Ցարական Ռուսաստանում եղել է Ելիզավետպոլի նահանգի մի մասը, իր ամբողջ քարոզչամեքենան սկսեց օգտագործել Արցախը ներկայացնելու սեփական տարածք և իր ժողովրդին գրգռել հայերի դեմ: Քարոզչական այդ մեքենան կիրառվում էր ինչպես Ադրբեջանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս՝ Հայաստանում, Վրաստանում, Եվրոպայում: Եթե տեղում այն օգտագործվում էր թուրք-թաթարական ամբոխներին հայության դեմ հանելու, հայ բնակչության նկատմամբ ձերբակալություններ, հետապնդումներ իրականացնելու, պարբերաբար հայկական ջարդեր կազմակերպելու և Հայաստանի դեմ ռազմական գործողություններն արդարացնելու նպատակով, ապա արտերկրում՝ Հայաստանը վարկաբեկելու և չեզոքացնելու, մեծ տերությունների մոտ իրենց վայրագությունները քողարկելու համար<sup>7</sup>: Մուսաֆաթական կառավարությունը, ինչպես ասացինք, կազ-

<sup>1</sup> , 1988 ..

<sup>2</sup> , 1989 ..

<sup>3</sup> ,, : », , 2001 ..

<sup>4</sup> Տե՛ս Յու. Բարսեղով, Ինքնորոշման իրավունքն ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմք է, Երևան, 1994թ.

<sup>5</sup> Տե՛ս Յր. Աբրահամյան, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991:

<sup>6</sup> Տե՛ս Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1984:

<sup>7</sup> Տե՛ս Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է, Երևան, 1991, էջ 192:

մակերպեց նաև երկրամասի բազմաթիվ բնակավայրերում հայության կոտորածներ, որոնցից հատկապես նշանավոր էր Բաքվի հայության կոտորածը, որին զոհ գնաց մոտավոր հաշվարկներով ավելի քանի 3000 հայ:

Այսպիսով, դիտարկելով 1918 թվականին տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները՝ կարող ենք փաստել այն հանգամանքը, որ նորանկախ Ադրբեջանի հանրապետությունը ուղղորդված կերպով պաշտոնական գիծ էր որդեգրել հայաթափելու երկրամասը, այսինքն շարունակում էր իր ավագ դաշնակցի՝ Թուրքայի քաղաքականությունը:

Արցախահայության համար ավելի բարդ իրադրություն ստեղծվեց այն ժամանակ, երբ Ադրբեջանի հանրապետության մուսաֆաթական կառավարությունը մեկ գիշերվա ընթացքում փոխեց իր կուսակցական պատկանելիությունը, դարձավ բուլշևիկ և երկրամասը հայտարարեց խորհրդային հանրապետություն: Այս իրողությունը հնարավորություն տվեց վերջիններիս վայելելու ոչ միայն թուրքական կառավարության աջակցությունը, այլ նաև խորհրդային Ռուսաստանի: Ռուսական կառավարությունը սկսեց աջակցել խորհրդային Ադրբեջանին՝ նպատակ ունենալով հայկական երեք երկրամասերի միջոցով ցամաքային կապ ստեղծել Թուրքիայի հետ, այսինքն տրագիտի խնդիրը դարձավ հայկական երկրամասերի ապագայի համար կարևոր գրավական: Ռուսաստանը ղեկավարող տարրերը ունեին բացահայտ հակադաշնակցական տրամադրվածություն և ամեն ինչով սկսեցին աջակցել մահմեդական տարրերին, ինչը օգտագործեց հայության դահճի համբավ ձեռք բերած Խոսրով-բեկ Սուլթանովը: Վերջինս շապիկի գույնը փոխել էր այն պատճառով, որ կարմիր բանակի զորամասերը մոտենում էին Արցախի սահմաններին: Նա մեկ գիշերվա ընթացքում դառնում է «կարմիր» և իրեն հորջորջում Շուշիի հեղկոմի նախագահ: Սուլթանով-դահճի դիմակը պատռելու նպատակով Արցախի աշխատավորների անունից Շուշիի խորհուրդը հեռագիր է ուղարկում խորհրդային Ռուսաստանի կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Լենինին և Ադրիեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին: Մայիսի 14-ին լուծարվում է Սուլթանովի ստեղծած հեղկոմը, և ստեղծվում է նոր հեղկոմ Բահադուր Վելիբեկովի նախագահությամբ: Սուլթանովին կանչում են Բաքու: Թվում էր, թե այդ դահիճը կստանար արժանի պատիժ: Սակայն Ն. Նարիմանովի հովանավորությամբ նա ազատվում է պատասխանատվությունից և ապահով տեղափոխվում Պարսկաստան ու շարունակում իր հակահայկական և հակախորհրդային գործունեությունը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո կարծես թե պետք է փոխվեր Մոսկվայի վերաբերմունքը՝ կապված հայկական երկրամասերի հետ, բայց փոփոխություն տեղի չունեցավ, թեև լուծվել էր տրանզիտի խնդիրը, և Ռուսաստանը ցամաքային կապ էր ստեղծել քենալական Թուրքիայի հետ: Բայց տարված լինելով հեղափոխությունը դեպի Արևելք տարածելու մոլուցքով՝ խորհրդային ղեկավարները ստիպված էին տեղի տալ թուրքական հակահայկական քաղաքականությանը: Բանն այն էր, որ Անդրկովկասյուն ղեկավարման իրական լծակներ ունեցող Նարիմանովը և Օրջոնիկիձեն ամեն ինչ անում էին, որ հայկական երեք երկրամասերը մնան խորհրդային Ադրբեջանին, Ն. Նարիմանովը Վ. Լենինին ուղղված իր նամակում անգամ սպառնում էր դուրս գալ խորհրդային վարչակարգի ենթակայությունից և անցնել Անգլիայի կողմը, իսկ Թուրքիայում իշխանության հասած Մ. Քենալը հուսադրում էր Մոսկվային, որ վաղ թե ուշ միանալու

է համաշխարհային հեղափոխությանը: Նման պայմաններում Մոսկվայի համար հայկական երկրամասերի պատկանելիության հարցը դառնում էր երկրորդական:

Հայաստանի խորհրդայանացումից ամիսներ անց, արդեն 1921թ. հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից որոշում ընդունվեց, որ Լեռնային Ղարաբաղը պետք է միացվի խորհրդային Ադրբեջանին: Մինչ այդ 1920 թ. մայիսին 11-րդ կարմիր բանակի կողմից տեղի ունեցավ Արցախ աշխարհի ռազմակալումը, և տարածքը հռչակվեց խորհրդային: Այս իրողությունը հույսեր առաջացրեց, որ խորհրդային կողմը կդադարեցնի ազգամիջյան բախումները, բայց տեղի ունեցավ հակառակը: Ադրբեջանական խռովարարներն ունեին ռուսական կողմի աջակցությունը և հնարավորություն էին ստացել ավելի անկաշկանդ իրականացնելու իրենց հակահայկական քաղաքականությունը: 11-րդ կարմիր բանակի և ադրբեջանական «կարմիր» ասկյարների կողմից Արցախը ռազմակալելուց հետո ևս այստեղ չդադարեց արյունահեղությունը: Վիճակը անկայունացնելու համար թուրքական կողմը հրահրում էր բախումներ: 1920 թվականի մայիսի 25-ի լույս 26-ի գիշերը մուսաֆաթականները հակախորհրդային խռովություն բարձրացրին Գանձակում, որին ակտիվորեն մասնակցում և զլխավորում էին թուրք սպաները: Խռովարարները տապալեցին խորհրդային իշխանությունը Գանձակում և ռազմական գործողություններ սկսեցին կարմիր բանակի զորամասերի դեմ<sup>1</sup>:

Մուսաֆաթականների և թուրք սպաների խռովությունները ուղղված էին նաև արցախահայության դեմ: Արցախահայության ոչնչացման խնդիրը շարունակում էր մնալ անգամ երկրամասի խորհրդայանցումից հետո: Խռովարարների դեմ զանգվածային պայքարի դուրս եկան Վարանդայում, Խաչենում, Ջրաբերդում և Գանձակում: Հայկական կողմը սկսեց կազմակերպել համրահավաքներ և կոչերով հանդես եկավ, որ աջակցեն խորհրդային իշխանություններին՝ ջախջախելու մուսաֆաթական ուժերը, որոնք երկար ժամանակ եղել էին իրենց դառնությունների պատճառը: Արցախահայերը կազմակերպում են աշխարհագրային ջոկատներ, փակում գյուղեր տանող ճանապարհները: Խռովարարները չէին կարողանում մթերք, փոխադրամիջոցներ ձեռք բերել հայկական գյուղերում, ինչը պատճառ դարձավ, որ խռովությունը դուրս չգա Շուշիի սահմաններից: Բավական ակտիվ էին գործում հյուսիսային Արցախի հայ գյուղացիները՝ Գյուլիստանի Բուզլուխ գյուղի բնակիչ Մացա (Մնացական) Հովհաննիսյանի և ռուսական բանակի գնդապետ Եգոր Տեր-Ավետիսյանի ընդհանուր հրամանատարությամբ: Այդ օրերին Լեռնային Ղարաբաղի հեղկոմի նախագահ Սաքո Համբարձումյանը Շուշիի Ղուկասյան դպրոցի նախկին ուսուցիչ Գրիգոր Ղարազոյգյանին ուղարկում է Ջանգեզուր՝ Դրոյին խնդրելու, որ Ջանգեզուրից չհեռանա մինչև չապահովվի արցախահայության պաշտպանությունը: Դրոն համաձայնում է:<sup>2</sup> Այս պայաքարը մեծ դերակատարում ունեցավ խռովարարների դեմ կարմիր բանակի հաղթանակի գործում: Բայց պետք է նշել, որ արցախահայությունը պայքարում էր ոչ թե խորհրդային կարգերի պահպանման, այլ սեփական պատմական հայրենիքում ազատ

<sup>1</sup> Տե՛ս Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը, Ստեփանակերտ, 2007 թ. էջ 210:

<sup>2</sup> Տե՛ս Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1984, էջ 102:

ու անկախ ապրելու համար, սակայն 1921 թ. հոլիսի 5-ի ապօրինի որոշումը խաթարեց արցախահայության հույսերը, և Արցախը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին:

Այսպիսով, Արցախյան հիմնախնդիրը թևակոխեց մի նոր շրջան, որը պետք է տևեր շուրջ յոթանասուն տարի և անկոտրում պայքարի արդյունքում միայն պետք է Արցախը ազատություն ստանար: Այդ յոթանասուն տարիների ընթացքում Ադրբեջանում լույս տեսան տասնյակ կեղծ գրքեր ու գրքույկներ, որոնք կեղծում ու աղավաղում էին Արցախի պատմական իրավունքը: Հարկ է նշել, որ այդ քաղաքականությունը Ադրբեջանական ղեկավարությունը շարունակում է մինչև օրս և ինչպես սեփական, այնպես էլ համաշխարհային համրությանը հրամցնում մտացածին հորինվածքներ: Այդ հողավածագիրներից հատկապես աչքի են ընկնում Թ. Մոչարլին, Ջ. Բ. Գուլիևը, Ի. Յ. Ալիևը, Է. Նամազովը և այլ հայտնի ու անհայտ կեղծարարներ:

Ադրբեջանական քարոզչամեքենան ի զորու չեղավ լռեցնելու արցախահայության ձայնը և առաջին իսկ հնարավորության դեպքում աշխարհասփյուռ հայությունը լծվեց Արցախի ազատագրման գործին:

**Ձոհրաբ Հովհաննիսյան, Արցախյան հիմնախնդիրը 1918-1921 թթ.** – Հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Արցախյան հիմնահարցի ուսումնասիրությունը: Հիմնահարցի պատմությունը սկսվեց այն պահից, երբ թուրք-թաթարական տարրերը հայտնվեցին տարածաշրջանում: Հարցի վերաբացման համար հիմք հանդիսացան Անդրկովկասյան Սեյմի անկումը և անկախ հանրապետությունների հռչակումը:

Այս հիմնահարցում էական դերակատարում ունեին մեծ տերությունները, հատկապես Ռուսաստանը: Հիմնախնդրի լուծումն իր կարևորությունը չի կորցրել մինչ օրս և այսօր էլ հանդիսանում է տարածաշրջանային և միջազգային դիվանագիտության առձակատման կիզակետ:

**Зохраб Оганнисян, Арцахский вопрос в 1918-1921 г. –**

**Zohrab Hovhannisyán, The problem of Artsakh in 1918-1921** – The problem of Artsakh has always been one of the most important subjects of investigation for the historians of newest era. The issue goes back to the period when turk-tartar “elements” appeared in the region.

The collapse of Transcaucasian Seimas and declaration of Independent States became a reasonable foundation for reopening of the issue. The powerful states especially Russia had crucial role in the solution of it. The issue is still relevant and is considered to be in the focus of regional and international diplomacy.

*Ձոհրաբ Հովհաննիսյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հարակից երկրների պատմության ամբիոնի մագիստրատուրայի շրջանավարտ, Երևանի թիվ 198 ավագ դպրոցի պատմության ուսուցիչ*

